ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԽԱՌԱՏՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ ԱՐՄԵՆԻ

ԼՈԳՈՊԵԴԱԿԱՆ ՎԱՂ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՄՈԴԵԼԸ ԱՌԻՏԻՋՄԻ ՀԱՄԱԽՏԱՆԻՇ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ

ԺԳ.00.03 - «Հատուկ մանկավարժություն» (Լոգոպեդիա) մասնագիտությամբ
մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2023

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր՝ Գոհար Ռոբերտի Հովյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ռոբերտ Նիկոլայի Ազարյան

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Լիլիթ Հայկարամի Սարատիկյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2023 թ.-ի մայիսի 4-ին, ժամը՝12:00–ին Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի «Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2023 թ.-ի մարտի 20-ին:

«Մանկավարժություն» 020 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,մանկավարժական
գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Թերեզա Յուրիի Ազատյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Աուտիզմի համախտանիշը արդի ժամանակաշրջանում ամենահաճախ ախտորոշվող հոգեբանական զարգացման տարաբնույթ խանգարումների ընդհանուր խումբ է, որն ի հայտ է գալիս վաղ մանկական տարիքում (մինչև 3 տարեկան), պահպանվում մեծահասակ տարիքում և բնութագրվում է սոցիալական փոխազդեցության խանգարումներով, հաղորդակցման միջոցների կիրառման դժվարություններով և վարքագծի խնդիրներով: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից հրապարակված ամենամյա տվյալները փաստում են, որ աուտիզմի համախտանիշ ունեցողների թիվը ներկայումս կտրուկ աճել է, մեծամասամբ, նաև գնահատման մեթոդների փոփոխությունների շնորհիվ, սակայն իրական աճի հարցն առայժմ անպատասխան է (J.Zeidan et al. 2022):

2021 թվականին իրականացված՝ աուտիզմի համախտանիշին վերաբերվող վիճակագրական հետազոտության տվյալները թույլ են տալիս փաստել, որ ներկայումս յուրաքանչյուր հարյուրերորդ երեխան ունի աուտիզմի սպեկտրի խանգարում (ԱՍԽ կամ ASD), ընդ որում, այս տվյալներն անընդհատ թարմացվում են (C.Dyer 2010, H.Maisonneuve, D.Floret 2012, E.Fombonne et al. 2019,2021): Վերոնշյալ ցուցանիշներն ահազանգ են ամբողջ աշխարհի հետազոտողների և ոլորտի մասնագետների համար՝ առավել աչալուրջ լինելու աուտիզմի համախտանիշ ունեցող, մասնավորապես, ԱՍԽ ունեցող երեխաների սոցիալական՝ շփման և հաղորդակցման խնդիրների գնահատման և, հնարավորինս վաղ, լոգոպեդական միջամտության կազմակերպման համար:

Ներկայումս, ամերիկյան «Խոսք-լեզու-լսողություն» (ASHA) կազմակերպության կողմից տրամադրված վիճակագրական տվյալներին համապատասխան ԱՍԽ ախտորոշվում է բացառապես վարքային ախտանիշների հիման վրա, ճանաչողական գործընթացների յուրօրինակ դրսևորումների արտահայտմամբ, որոնք երբեմն ուղեկցվում են մտավոր գործունեության դժվարություններով, հաղորդակցման նախաձեռնության պակասով, ինչի արդյունքում էլ գրեթե անհնար է դառնում նրանց սոցիալական հարմարումը: Սույն համախտանիշի վաղ և ճիշտ ախտորոշման գլխավոր նպատակներից է երեխայի զարգացման մանկավարժական գործընթացի վաղ և գրագետ մեթոդակազմով կազմակերպումը (К.Лебединская, О.Николская 1989, D.Williams, G.Goldstein, N.Minshew 2006, Е.Солдатенкова 2012, D.Loeb, E.Davis & T. Lee 2021):

Թեև վերջին տասը տարիների ընթացքում այս երեխաների վարքաբանական, հաղորդակցական, գնահատման և սոցիալական հարմարման խնդիրների կարգավորման համար ամբողջ աշխարհում կիրառելի են վալիդացված բազմաթիվ առանձին մեթոդներ և միջոցներ, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, աուտիզմի համախտանիշի հաղթահարման լոգոպեդական գործընթացում, շատ քիչ են գործածվում մեթոդական և նեղ

մասնագիտական համալիր միջամտության մոտեցումներ ու մոդելներ։ Ամբողջ աշխարհում ընդունված արդյունավետ գործող մոդելները հիմնված են վերականգնողական տարբեր կենտրոններում իրականացվող բազմամասնագիտական թիմային աշխատանք ներառող սկզբունքների վրա, որոնցում լոգոպեդական աշխատանքի դերը առանձնակի կարևորություն ունի։ Մեր երկրում, սակայն, լոգոպեդական վաղ միջամտության այսպիսի մոդելները խիստ սակավաթիվ են, ինչով և պայմանավորված է **ատենախոսական թեմայի արդիականությունը** (S.Rogers & G.Dawson 2009, И.Сухорукова 2012, С.Гринспен 2013, F.Affolter and Walter 2013, К.Харатян, Г.Овян 2019):

Մանկավարժական ժամանակակից մոտեցումների կիրառումը հնարավորություն է ստեղծում աուտիզմի հաղթահարման լոգոպեդական վաղ միջամտության գործընթացում մեթոդների և դրանց կիրառման մանկավարժական պայմանների առաջադրման ու ապահովման համար՝ շեշտադրելով երեխայի անհատական մոտեցման և պոտենցիալ հնարավորությունների հաշվառումը, ուսուցման վայրի, դիդակտիկայի և կիրառվող մեթոդակազմի սկզբունքայնությունը, ինչը դեռևս թերի օղակ է մեր համակարգում (P.Prelock, R.Paul & E.Allen 2011, K.Kharatyan, G.Hovyan 2021):

ԱՍԽ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում գործածվող լոգոպեդական վաղ միջամտության ժամանակակից մեթոդների և միջոցների առանձին կիրառումը որոշակիորեն խթանում է երեխայի զարգացմանը, սակայն պետք է շեշտադրել այս մեթոդների համակարգային մշակման անհրաժեշտությունը՝ ի նպաստ աուտիզմ ունեցող երեխաների բազմակողմանի զարգացման և լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմամբ վերոնշյալ աշխատանքների արդյունավետության բարձրացման (Е.Янушко 2011, Р.Лиф, Д.Макэкен 2016, Ք.Խառատյան, Գ.Հովյան 2020):

Թե՛ մասնագիտական վերլուծության, և թե՛ մեր կողմից իրականացված հետազոտությունների արդյունքները փաստում են, որ նույնիսկ վաղ կազմակերպված լոգոպեդական աշխատանքը համապատասխան արդյունավետություն չի ապահովում, քանզի հաճախ, այս գործընթացում, հաշվի չեն առնվում երեխայի զարգացման անհատական առանձնահատկություններն ու առաջադրվող մանկավարժական պայմանները։ Ձևավորված հակասության հաղթահարման անհրաժեշտությամբ են նաև պայմանավորված մեր ուսումնասիրությունները։ ԱՍԽ ունեցող երեխաների արդյունավետ լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման համար անհրաժեշտ է աշխատանքը սկսել 0-3 տարեկան հասակում, երեխաների նկատմամբ ցուցաբերել անհատական մոտեցում և կիրառել աուտիզմի համախտանիշի հաղթահարման վաղ միջամտության համակարգային մոդել։

<u>Հետազոտության նպատակն</u> է մշակել աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել։

Հետազոտության օբյեկտը աուտիզմի սպեկտրի խանգարումներ (ԱՍԽ) ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության համակարգային մոդելի կիրառման գործընթացն է:

Հետազոտության առարկան աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառման մեթոդներն ու միջոցներն են:

Հետազոտության գիտական վարկածը: Ենթադրվում է, որ ԱՍԽ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման ձևավորման, զարգացմանն ուղղված աշխատանքն առավել արդյունավետ կարող է կազմակերպվել, եթե լոգոպեդական վաղ միջամտության գործընթացում կիրառվեն.

- ԱՍԽ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման գնահատման, վաղ միջամտության մեթոդների և մոտեցումների համակարգման առավել արդյունավետ ուղիներ
- լոգոպեդական վաղ միջամտության հաստատված մեթոդների ու միջոցների համակարգային և կիրառական մոդել, որը կներառի աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիր:

Լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառումը թույլ կտա համակարգել աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների սոցիալական հարմարվողականության զարգացումը, աջակցել իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության գործընթացի կազմակերպմանը՝ ներգրավելով նրանց սոցիալական միջավայր, ընդլայնելով նրանց սոցիալական շփումը և զարգացնելով երեխաների էքսպրեսիվ բանավոր խոսքը:

Նպատակը, օբյեկտը, առարկան և վարկածը որոշել են հետազոտության հիմնական խնդիրները.

1. Ուսումնասիրել հետազոտվող հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ժամանակակից մոտեցումները գիտամեթոդական գրականության մեջ և լոգոպեդական վաղ միջամտության պայմաններում:

2. Ուսումնասիրել և վերլուծել ԱՍԽ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ հաղորդակցման միջոցների ձևավորման, կազմակերպման առանձնահատկությունները, որոնք համապատասխան մոդելի կիրառման պայմաններում կնպաստեն նրանց սոցիալական շփման հնարավորությունների զարգացմանը:

3. Մշակել ԱՍԽ ունեցող երեխաների խոսքի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել, առաջադրել լոգոպեդական վաղ միջամտության մանկավարժական պայմաններ և փորձարարական ճանապարհով հիմնավորել առաջարկվող մոտեցումների կիրառման արդյունավետությունը:

Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել այն գիտական սկզբունքներն ու դրույթները, որոնք հաստատվել են ընդհանուր և

հատուկ մանկավարժության, ինչպես նաև՝ հոգեբանության բնագավառում, մասնավորապես՝

- Աուտիզմ ունեցող երեխաների խոսքի զարգացման առանձնահատկությունները (Л.Г.Нуриева 2003):
- Գործողությունների և հասկացությունների փուլային ձևավորման տեսությունը (П.Я.Гальперин 1977):
- Զարգացնող ուսուցման տեսությունը (В.В.Давыдов 1996):
- Երեխայի անձի ձևավորման տեսությունը՝ հաղորդակցման գործընթացում (А.А.Леонтьев 1969,1997, М.И.Лисина 1985,2009):
- ԱՍԽ ունեցող երեխաների հաղորդակցման միջոցների ձևավորման ուղղությունները (А.В.Хаустов 2007,2009) և աուտիզմի հիմնախնդրի հոգեբանական վերլուծության տեսությունը (Ф.Аппе 2006):

Առաջադրված խնդիրների լուծման նպատակով կիրառվել են **հետազոտության** հետևյալ **մեթոդները**.

- գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, տեսական վերլուծություն, ընդհանրացում
- հետազոտվողների մանկավարժական և բժշկական փաստաթղթերի ուսումնասիրում ու վերլուծություն
- հոգեբանամանկավարժական և սոցիոլոգիական հետազոտման մեթոդներ՝ դիտում, զրույց, հարցում, թեստավորում
- հետազոտման փորձարարական մեթոդներ՝ հաստատող և ձևավորող
- ստուգողական փորձարկումներ
- մաթեմատիկական վիճակագրական մեթոդներ:

Հետազոտության գիտական նորույթը.

- ուսումնասիրվել է ԱՍԽ ունեցող երեխաների լոգոպեդական վաղ միջամտության աշխատանքների դրվածքը վերականգնողական և կրթական տարբեր հաստատություններում, մասնավորապես՝ «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնում
- բացահայտվել է ոլորտի մասնագետների, ուսանողների, ծնողների տեղեկացվածության մակարդակը ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության աշխատանքների իրականացման պայմաններում
- սահմանվել են այս համակազմի երեխաների լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման հիմնական ուղղությունները, բնույթը, բովանդակությունը և մշակվել է աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության՝ խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդել, որը ներառում է աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիր:

Հետազոտության տեսական նշանակությունը աուտիզմ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառման տեսական հիմնավորումն է՝ վերականգնողական հաստատություններում իրականացված հետազոտության արդյունքների

վերլուծության և համադրման հիման վրա, համալիր լոգոպեդական ծրագրի, աուտիզմ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման զարգացման առավել արդյունավետ մեթոդների, միջոցների, ինչպես նաև մանկավարժական պայմանների վերաբերյալ տեսական պատկերացումների այնպիսի ընդլայնումը, ինչը հնարավորություն կտա մշակել տեսական հետազոտությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը և համալրել լոգոպեդական տեսական փորձը նոր գիտահետազոտական փաստերով:

<u>Հետազոտության գործնական նշանակությունը</u> ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության մեթոդների արդյունավետության բարձրացմանն ուղղված և առաջարկվող մանկավարժական պայմանների գործնական մշակումն ու դրանց ներդրումն է մանկավարժական գործընթացում՝ լոգոպեդական վաղ միջամտության մոդելի համալիր ծրագրի միջոցով: Մշակված լոգոպեդական վաղ միջամտության մոդելը ներդրված է «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնի լոգոպեդական պրակտիկայում, իսկ առաջարկված գործնական և ծրագրային նյութերը (խաղային առաջադրանքներ, վարժություններ, հնարներ, խորհուրդներ, պայմաններ, երեխայի տարիքային և խաղի զարգացման սանդղակներ) կարող են գործածվել նախադպրոցական տարիքի (0-6 տարեկան) ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական միջամտության գործընթացում՝ հնարավորինս վաղ (0-3 տարեկան) միջամտության կազմակերպման շեշտադրմամբ:

<u>Պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթներն են.</u>

1. Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների խոսքի և հաղորդակցման ձևավորմանն ու զարգացմանն ուղղված համակարգային մոդելը ներառում է գործնական մեթոդներ և միջոցներ, սոցիալական հարմարվողականության համալիր ծրագիր, որը լոգոպեդական վաղ միջամտության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ նախադրյալ է:
2. Մասնագիտացված հաստատություններում իրականացված ուսումնավերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և լոգոպեդական գնահատումները հնարավորություն են ստեղծում համակարգելու աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիրը:
3. Լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառումը նպաստում է աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների ներգրավմանը սոցիալական միջավայր՝ ընդլայնելով նրանց սոցիալական շփումը, իսկ մանկավարժական որոշակի պայմանների առաջադրումը հնարավորություն է ստեղծում ընդլայնել երեխայի հաղորդակցական հնարավորությունները:

<u>Հետազոտության արդյունքների հավաստիությունն ու հիմնավորումը</u> ապացուցվում է տարբեր բնագավառների գիտական նվաճումների վրա հիմնված մեթոդոլոգիական մոտեցմամբ, հետազոտության խնդիրների և ուսումնասիրվող դրույթների բնույթին համապատասխան համակարգային

մեթոդների կիառմամբ, վիճակագրական ժամանակակից մեթոդների կիրառմամբ (Բաց հասարակության հիմնադրամներ՝ հայաստանյան գրասենյակի «Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների» կենտրոնի 2019թ. և ՅՈՒՆԻՍԵՖ՝ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ 2020թ.), հետազոտվողների բավարար քանակակազմով, անցկացված աշխատանքի ծավալով, փաստացի փորձարարական նյութերի վիճակագրական մշակմամբ, ստացված որակական և քանակական արդյունքների ներդրմամբ:

Հետազոտության փորձաքննությունն ու ներդրումը: Հետազոտության հիմնական դրույթները, արդյունքները և հետևությունները 2019-2022 թվականներին քննարկվել են Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի «Լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի» ամբիոնի նիստերում, «ԱրԲԵՍ» առողջության կենտրոնի մասնագիտական սեմինարներում, հեռուստաթերների ընթացքում: Իրականացված դիտարկումների և հետազոտությունների արդյունքների հիման վրա տպագրված հոդվածները տեղ են գտել հայկական և միջազգային գիտական ամսագրերում, հեղինակային՝ հրատարակված աշխատություններում: 2022 թվականի մարտ ամսին, ԱՄԽ հիմնահարցերի շրջանակներում, հայկական սփյուռքի համայնքների դպրոցների տնօրենների և մանկավարժների մասնակցությամբ կայացած «Սփյուռքի ուսուցիչների հետ հանդիպումը» Zoom հեռավար հարթակում ևս նպաստել է միջմասնագիտական կապերի և խնդրո առարկայի շուրջ իրազեկման բարձրացմանը՝ որպես խոսնակ ներկայանալով համապատասխան զեկույցով և քննարկմամբ:

Ատենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը շարադրված է 161 էջ համակարգչային տեքստով, կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսության տեքստը պարունակում է 14 աղյուսակ, 20 տրամագիր, 1 գծապատկեր, 1 նկար և 9 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածականում հիմնավորված է թեմայի արդիականությունը, բացահայտված է հիմնախնդրի մշակվածության աստիճանը, ներկայացված են հետազոտության նպատակը, գիտական վարկածը, նպատակից և գիտական վարկածից բխող հետազոտության խնդիրները, առարկան, օբյեկտը, տեսական և մեթոդաբանական հիմքերը, հետազոտության մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը, փորձաքննությունը:

Ատենախոսության՝ **«Հիմնախնդրի դրվածքը ժամանակակից լոգոպեդիայում»** խորագրով առաջին գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին գլխի՝ «Աուտիզմը որպես հաղորդակցման, վարքի, սոցիալական հարմարման և խոսքային գործունեության խանգարում» խորագրով առաջին ենթագլխում լուսաբանված են համաշխարհային մասնագիտական և մեթոդաբանական գրականության մեջ կիրառվող «աուտիզմ» (հուն. autos – ինքս) հասկացությանը և աուտիզմի համախտանիշին վերաբերվող եզրաբառերի վերլուծությունները, պատմական ակնարկները և ԱՍԽ ունեցող անձանց մանկավարժահոգեբանական բնութագիրը (L.Kanner 1943, H.Asperger 1991, A.Lee, R.Hobson & S.Chiat 1994, A.Bailey 1995, S.Ozonoff 2005, A.Miller 2006, D.Williams et al. 2006, C.Freitag 2007, Е.Блейлер 2012, ՀՀ-ում ներառական կրթության իրականացման գնահատում 2013):

«Աուտիզմի համախտանիշի դրսևորումները վաղ մանկական տարիքում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են այս համակազմի երեխաների զարգացման առանձնահատկությունները վաղ մանկական (0-3տ.) տարիքում, տարբերակված ու վերլուծված են բնականոն զարգացում և ԱՍԽ ունեցող երեխաների տարիքային զարգացման և հաղորդակցման միջոցների ձևավորման համեմատական բնութագրերը (В.Башина 1999, Е.Баенская 2007, А.Сорокин, Е.Давыдова 2017, K.Kharatyan 2021):

«Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքի մեթոդների և մոտեցումների վերլուծություն» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված են հիմնախնդրի դրվածքը տարբեր ժամանակաշրջաններում, ինչպես նաև հաղորդակցման բազմամակարդակ գործընթացի ձևավորմանն ուղղված տարբեր մեթոդների, հնարների էվոլյուցիոն զարգացումը, վերլուծված են աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հաղորդակցման զարգացման առաջարկվող նոր մեթոդների և մոտեցումների ընտրության տարբերակները՝ ըստ տարբեր հետազոտողների (A.Ayres 1974, E.Clark 1978, O.Lovaas 1987, E.Schopler & G.Mesibov 1995, С.Гринспен 2013, F.Affolter and Walter 2013 և այլոց):

«Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության առանձնահատկությունները վերականգնողական հաստատություններում» խորագրով չորրորդ ենթագլխում, ըստ միջազգային փորձի, հիմնավորված են աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական աշխատանքի առանձնահատկություններն ու մեթոդների կիրառման հնարավորությունները վերականգնողական հաստատություններում, համաձայն որոնց այս համակազմի երեխաների հաղորդակցման միջոցների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների արդյունավետ կազմակերպման հիմնահարցը խիստ արդիական է նաև մեր երկրում, սակայն դեռևս կան չլուսաբանված կողմեր (S.Myers 2007, Kasari et al. 2008, Գ.Զաքարան և այլոց 2008, L.Zwaigenbaum et al. 2009, S.Rogers et al. 2010, С.Гринспен 2013, F.Affolter and Walter 2013, А.Варламов, И.Скороходов 2019, К.Харатян, Г.Овян 2019):

«Աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության հետազոտության վերլուծություն» խորագրով **երկրորդ գլուխը** բաղկացած է երեք ենթագլխից:

«Հետազոտության հիմնավորումը, խնդիրները, մեթոդները, կազմակերպումը և լոգոպեդական աշխատանքի փուլերը» խորագրով առաջին ենթագլխում ներկայացված է աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության մոտեցումների դրվածքը տարբեր կենտրոններում, ինչպես նաև, հետազոտության առջև դրված խնդիրների լուծման համար կիրառված հետազոտության տեսական և փորձարարական մեթոդները: Հարցումներն ու փորձարարական հետազոտություններն իրականացվել են 2019-2021 թվականներին՝ Երևանի և ՀՀ 5 մարզային (Գավառ, Արտաշատ, Արմավիր, Գյումրի, Սևան) վերականգնողական կենտրոնների («ԱրԲԵՍ» ԱԿ, «Իմ ուղի» ուսումնավերականգնողական ցերեկային կենտրոն, «Սորս» հիմնադրամ, «Պորտալ» էրգոթերապիայի կենտրոն, պոլիկլինիկաներին կից գործող մասնագետներ, Գավառի, Արտաշատի, Արմավիրի, Գյումրիի, Սևանի մանկական վերականգնողական կենտրոններ), ինչպես նաև՝ անհատական ծառայություններ մատուցող մասնագետների շրջանում: Նշված ժամանակահատվածում, ողջ հետազոտության ընտրանք են հանդիսացել ԱՍԽ ունեցող 616 երեխա:

Անկետավորման միջոցով գնահատվել է վաղ միջամտության, ինչպես նաև համալիր մեթոդակազմի կիրառման արդյունավետությունը: Ատենախոսության այս ենթաբաժնում իրականացված հետազոտությունն ամբողջությամբ ներկայացված է մի քանի փոխկապակցված փուլերով:

«Լոգոպեդական վաղ միջամտության հետազոտության արդյունքների վերլուծությունը ԱՍԽ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են իրականացված

սոցիոլոգիական հարցման միջոցով բացահայտված մասնագետների, ուսանողների, ծնողների իրազեկվածության մակարդակի տվյալների վերլուծության արդյունքները, համալիր մեթոդակազմով լոգոպեդական աշխատանքի արդյունավետության արդյունքների վերլուծությունը:

Սոցիոլոգիական հետազոտությանը մասնակցել են ընդհանուր թվով 173 մասնագետներ, որոնցից ԱՍԽ ունեցող երեխաների հետ տարբեր պետական և մասնավոր կենտրոններում աշխատող 30 լոգոպեդներ, 53 մանկավարժահոգեբանական աջակցության այլ մասնագետներ, 50 ուսանողներ, ԱՍԽ ունեցող երեխաների 40 ծնողներ:

Հետազոտության արդյունքները հաստատում են, որ մասնագետների մեծամասնությունը, ունենալով թիմային աշխատանքի և մեթոդական համալիր միջամտության կողմնորոշում, այնուամենայնիվ, ԱՍԽ ունեցող երեխաների հետ լոգոպեդական աշխատանքը իրականացնում են հիմնականում թիմային աշխատանքներից անկախ՝ անհատական պարապմունքների ձևաչափով՝ լոգոպեդի հայեցողությամբ ընտրված առանձին մեթոդի կիրառությամբ, հաշվի չառնելով երեխայի տարիքային և զարգացման անհատական առանձնահատկությունները, զուգահեռաբար չի իրականացվում նաև հոգեբանամանկավարժական աջակցություն կազմակերպող մյուս մասնագետների աշխատանք, իսկ ծնողավարությունը ձևական բնույթ է կրում:

«ԱՍԽ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության ուսումնասիրությունը» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է ՀՀ-ում գործող վերականգնողական և զարգացնող տարբեր կենտրոններում իրականացված մեր ուսումնասիրությունների արդյունքների վերլուծությունը, ըստ որի բացահայտված է ԱՍԽ ունեցող երեխաների հետ աշխատանքի համալիր մեթոդական միջամտության համար նախատեսված տեսական և գործնական գործիքակազմը մեր երկրում: Ատենախոսության այս ենթաբաժնում մասնավորապես դիտարկվել են 2020 թվականի հունվար-հունիս ամիսների ընթացքում «ԱրԲԵՍ» ԱԿ-ի մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող տարբեր մասնագետների կողմից՝ աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաներին ցուցաբերվող ծառայությունների վիճակագրական ուսումնասիրությունների վերլուծությունը (միայն ըստ սեռային և տարիքային առանձնահատկությունների տվյալների վերլուծության), ինչը փաստում է, որ ԱՍԽ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական արդյունավետ աշխատանքի լավագույն մոդելներից է երեխային հատկացվող՝ համալիր մեթոդակազմ ունեցող վաղ միջամտությունը՝ բազմամասնագիտական թիմային աշխատանքով (Գ.Զաքարան, Ա.Սահակյան, Լ.Մելքոնյան 2008, К.Харатян, Г.Овян 2019):

Երրորդ գլուխը կրում է **«Լոգոպեդական վաղ միջամտության աշխատանքների առանձնահատկությունները աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող աշխատանքում»** խորագիրը և բաղկացած է երեք ենթագլխից:

«ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության համակարգային մեթոդները և միջոցները» խորագրով առաջին ենթագլխում շարադրված է այս համակազմի երեխաների հետ իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության համակարգային մոտեցման մոդելը, որը ներառում է վերականգնողական միջամտության համալիր ծրագիր, որով և սահմանվում է լոգոպեդական վաղ միջամտության կազմակերպման բնույթը, բովանդակությունը և հիմնական ուղղությունները:

Մեր կողմից առաջադրվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելը «ԱրԲԵՍ» ԱԿ-ում տարիներ շարունակ հաջողությամբ կիրառվող բժշկամանկավարժական համակարգային մոտեցումների բաղկացուցիչ և հատկանշական մասն է կազմում:

Կիրառվող մոդելի էությունը այս համակազմի երեխաների սոցիալական շփման և բանավոր խոսքի ձևավորմանն ու զարգացմանն ուղղված միջոցների համակարգային մոտեցման կազմակերպումն է՝ մանկավարժական պայմանների, այդ գործընթացում ներգրավված անձանց՝ մանկավարժահոգեբանական աջակցություն տրամադրող մասնագետների ու ծնողների դերակատարման առանձնահատկությունների համալիր ծրագրի առաջադրմամբ:

«Լոգոպեդական վաղ միջամտության համակարգային մոդելի կիրառման առանձնահատկությունները» խորագրով երկրորդ ենթագլխում ներկայացված են առաջադրված մոդելի կիրառման արդյունավետության հիմնավորման նպատակով մեր կողմից իրականացված միամյա գիտափորձերի արդյունքները՝ 2019-2022 թթ. ժամանակաշրջանում: Ողջ հետազոտության ընտրանք են հանդիսացել ԱՍԽ ունեցող 616 երեխաներ, որից 181-ը՝ միամյա ուսուցանող և ստուգողական գիտափորձերում, ընդ որում, 72-ը մասնակցել են 2020-2021թթ. Երևանի «ԱրԲԵՍ» ԱԿ-ում մեր կողմից իրականացված «Լոգոպեդական վաղ և ուշ միջամտության համեմատական գիտափորձում», 41 երեխաները ներգրավված են եղել 2020-2021թթ. Երևանի «ԱրԲԵՍ» ԱԿ-ում իրականացված՝ «Ծնողների մասնակցությամբ կազմակերպվող լոգոպեդական աշխատանքների միամյա գիտափորձում», իսկ 68-ը՝ 2021-2022թթ. «Երևանի «ԱրԲԵՍ» ԱԿ-ում և Սևանի մանկական վերականգնողական կենտրոնում (ՄՎԿ) վաղ լոգոպեդական միջամտության միամյա համեմատական գիտափորձում», որից ստացված արդյունքները ներկայացված են հաջորդ ենթագլխում:

«ԱՍԽ ունեցող երեխաների հետ կազմակերպվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառման արդյունավետության փորձարարական հիմնավորումը» խորագրով երրորդ ենթագլխում ներկայացված է լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմամբ՝ 2021-2022թթ. իրականացված միամյա գիտափորձը, որի համար ընտրանք են հանդիսացել նույն՝ ԱՍԽ ախտորոշումն ունեցող ընդհանուր թվով 68 վաղ միջամտություն ստացած (0-3 տարեկան) երեխա, որոնք բաժանվել են 2 խմբի՝ փորձարարական և ստուգողական, համապատասխանաբար ընդգրկելով 34 երեխա:



Տրամագիր 1. Հետազոտական խմբերի լոգոպեդական միջամտության առաջնային գնահատման տվյալների վերլուծություն



Տրամագիր 2. Լոգոպեդական միջամտության վերջնական գնահատման տվյալների վերլուծությունը հետազոտության ստուգողական և փորձարարական խմբերում

Գիտափորձը միտված է վեր հանելու լոգոպեդական վաղ միջամտության համալիր մեթոդակազմի կիրառման և ոչ համալիր մեթոդներով աշխատանքի արդյունավետության համեմատական պատկերը: Լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմամբ հավաքագրված առաջնային գնահատման թերթիկների արդյունքների հիման վրա ակնառու են երեխաների հաղորդակցման զարգացման նախնական մակարդակները՝ երեխայի հաղորդակցման և խոսքի զարգացման համապատասխան բաժիններով:

Ինչպես երևում է տրամագիր 1-ից, հետազոտության երկու խմբում էլ որպես ընտրանք ընդգրկվել են միանման նախնական գնահատման արդյունքներով երեխաներ, որպեսզի գրանցված զարգացման հետագա արդյունքների համեմատությունը առավել ակնառու լինի: Երկու խմբերի երեխաներն էլ չունեն էքսպրեսիվ և իմպրեսիվ խոսք, ինչպես նաև՝ ոչ խոսքային հաղորդակցման հմտություններ: Սակայն դրան զուգահեռ երկու խմբի բոլոր երեխաների 40 %-ն (13 երեխա) ունեն «Խոսքի արտաբերական կողմ» բաժնում դրական դինամիկայի

միտում գրանցող տվյալներ, իսկ «Խոսքի առանձնահատկություններ» բաժնում գրանցված են էխոլոլիաներ, առանձին վանկերի կամ օտարալեզու բառերի առկայություն։

Տրամագիր 2-ում ներկայացրել ենք երկու խմբերի փորձարկվողների վերջնական գնահատման արդյունքները։

Իմպրեսիվ խոսքի ձևավորում բաժնում փորձարարությունից հետո արդյունքներ են գրանցել փորձարարական խմբի երեխաների 90%-ը (30 երեխա) և ստուգողական խմբի երեխաների 60%-ը (20 երեխա)։ Ոչ խոսքային հաղորդակցում բաժնում արդյունքներ են գրանցել փորձարարական խմբի երեխաների 90%-ը (30 երեխա) և ստուգողական խմբի երեխաների միայն 40%-ը (13 երեխա)։

Ինչ վերաբերվում է «Էքսպրեսիվ խոսքի», «Խոսքային առանձնահատկությունների» և «Արտաբերական կողմի» բաժինների ցուցանիշներին, ապա այստեղ փորձարարությունից հետո բարձր արդյունավետություն է գրանցել փորձարարական խմբի երեխաների՝ 80%-ը (27 երեխա), իսկ ստուգողական խմբի՝ 60%-ը (20 երեխա)։

Այսպիսով, կարող ենք փաստել, որ 0-3 տարեկան ԱՍԽ ունեցող երեխաները լոգոպեդական վաղ՝ համալիր մեթոդական միջամտություն մանկավարժական պայմաններում ավելի բարձր արդյունավետություն են գրանցում։

Քանի որ առանձին մեթոդներից մեր կողմից ընտրված են «Խաղային թերապիա» և «ABA» մեթոդները, կարող ենք եզրակացնել, որ «ABA» մեթոդի տարրերով իրականացված երկարատև աշխատանքը թեև նպաստում է ԱՍԽ ունեցող երեխայի վարքային խանգարումների նվազեցմանը, այնուամենայնիվ, լոգոպեդական և վերականգնողական հետագա արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ են զգայական և կոգնիտիվ զարգացնող շեշտադրված մոտեցումներ։ Որոշ ժամանակ անց երեխան ունենում է զգայական ընկալման հետ կապված խնդիրներ և խաղային, ապա՝ հաղորդակցման հմտությունների պակաս, ինչը հանգեցնում է հետագա զարգացման հապաղմանը։ Նկատելի է դառնում ինչպես զգայական ոլորտի, այնպես էլ խաղային հմտությունների զարգացման առանձնակի ներազդեցության անհրաժեշտություն։ Մյուս դեպքում, երբ կիրառվում են միայն «Խաղային թերապիայի» մեթոդական մոտեցումներ, երեխան՝ վարքային խնդիրների պատճառով մեծ դժվարություններ է ունենում վերականգնողական գործընթացին ամբողջական ներգրավվելու տեսանկյունից, իսկ զգայական խնդիրները թույլ չեն տալիս երեխային կենտրոնանալու և լիարժեքորեն մասնակցելու խաղին, և այս ամենը, որպես հետևանք, դանդաղեցնում կամ գրեթե զրոյացնում է հաղորդակցման և խոսքի զարգացման հնարավոր ընթացքը։

Աղյուսակ 1

Լոգոպեդական միջամտության առաջնային և վերջնական գնահատման տվյալների վերլուծությունը ստուգողական և փորձարարական խմբերում

Ուսումնասիրվող չափանիշներ	Հետազոտման փուլերը	Կատարման արդյունքներ			
		Փորձարարական Խումբ N=34		Ստուգողական խումբ N=34	
		N	%	N	%
Ոչ խոսքային հաղորդակցում	Մինչ փորձ.	0	0	0	0
	Փորձ.հետո	30	90	13	40
Իմպրեսիվ խոսք	Մինչ փորձ.	0	0	0	0
	Փորձ. հետո	30	90	20	60
Էքսպրեսիվ խոսք	Մինչ փորձ.	0	0	0	0
	Փորձ. հետո	27	80	20	60
Խոսքի առանձնահատկություններ	Մինչ փորձ	13	40	13	40
	Փորձ. հետո	27	80	20	60
Խոսքի արտաբերական կողմ	Մինչ փորձ	13	40	13	40
	Փորձ. հետո	27	80	20	60
Արդյունքներ	Մինչ փորձ	-	16	-	16
	Փորձ. հետո	-	72	-	47

Ամփոփելով միամյա մանկավարժական գիտափորձի արդյունքները ստուգողական և փորձարարական խմբերում կարող ենք նշել, որ լոգոպեդական միջամտության տեսանկյունից մանկավարժական փորձարարության տարբեր փուլերում դրական փոփոխություններ գրանցեցին ԱՍԽ ունեցող երկու խմբերի բոլոր երեխաները, սակայն միայն մեկ մեթոդի տարրերի կիրառումն առանց երեխայի անհատական առանձնահատկությունների հաշվառման, չի ապահովում սպասվելիք հնարավոր բարձր արդյունավետություն: Արդյունքում նկատելի բարձր արդյունավետություն են ցուցաբերել այն երեխաները, ովքեր համալիր մեթոդների կիրառմամբ ստացել են վաղ միջամտության լոգոպեդական ծառայություններ:



Տրամագիր 3. Միամյա մանկավարժական գիտափորձի ամփոփիչ արդյունքների վերլուծությունը ստուգողական և փորձարարական խմբերում

Վերոնշյալ վերլուծությունները աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող, մեր կողմից առաջադրվող լոգոպեդական վաղ միջամտության փորձարարական մոդելի կիրառման արդյունավետությամբ թույլ են տալիս փաստել որոշակիորեն մշակված լոգոպեդական ծրագրի կիրառման գործնական նշանակությունը՝ աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների սոցիալական հարմարվողականության, խոսքի և հաղորդակցման զարգացման մեթոդների և միջոցների կիրառմամբ, ինչն էլ լոգոպեդական վաղ միջամտության արդյունավետ կազմակերպման անհրաժեշտ նախադրյալն է: Պետք է փաստել նաև, որ մասնագիտացված հաստատություններում իրականացված ուսումնավերականգնողական աշխատանքների արդյունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և լոգոպեդական գնահատումները հնարավորություն ստեղծեցին համակարգելու աուտիզմի սպեկտրի խանգարումների հաղթահարման համալիր ծրագիրը: Ինչ վերաբերվում է լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառմանը, ապա վստահաբար կարող ենք հաստատել, որ այն նպաստում է աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների ներգրավմանը սոցիալական միջավայր՝ ընդլայնելով նրանց սոցիալական շփումը, իսկ մանկավարժական որոշակի պայմանների առաջադրումը հնարավորություն է ստեղծում ընդլայնել երեխայի հաղորդակցական հնարավորությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, գիտամեթոդական գրականության վերլուծությունը, աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ իրականացվող լոգոպեդական աշխատանքների արդունավետության բարձրացման մանկավարժական դիտումները և գնահատումները, վերականգնողական հաստատություններում աշխատող լոգոպեդների գործնական փորձը, ինչպես նաև մեր կողմից իրականացված բազմաձավալ հետազոտությունները և միամյա

մանկավարժական գիտափորձը թույլ են տալիս կատարել հետևյալ եզրակացությունն իր հետևություններով.

1. Հայաստանի Հանրապետությունում գործող մանկավարժահոգեբանական ծառայություններում աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների հետ աշխատելու նեղ մասնագիտացում ունեցող մասնագետների թիվը շատ չէ, ԱՍԽ հիմնահարցերը խորապես ուսումնասիրված չեն, իսկ կազմակերպվող լոգոպեդական աշխատանքներում հաշվի չեն առնվում երեխայի տարիքային առանձնահատկությունները:
2. Վերականգնողական կենտրոններում իրականացվող լոգոպեդական աշխատանքի համալիր մեթոդական միջամտության համար նախատեսված տեսական և գործնական գործիքակազմը գրեթե բացակայում է:
3. Երեխայի անհատական կարողությունների և առկա հնարավորությունների հաշվառման հիման վրա ընտրված մեթոդակազմն ու մանկավարժական համապատասխան պայմանների առաջադրումը հնարավորություն է ընձեռում արձանագրել որոշակի ադյունքներ և քննարկել վաղ միջամտության մեթոդների համադրման հարցերը:
4. Բացահայտված է, որ երևանյան և մարզային կենտրոններում իրականացված միամյա գիտափորձի տվյալներին համապատասխան, լոգոպեդական վաղ (0-3 տարեկան) միջամտության պայմաններում (փորձարարական խումբ՝ 72%), (ստուգողական խումբ՝ 47%) մեթոդական համալիր մոդելի կիրառումն ապահովում է բարձր արդյունավետություն:
5. Լոգոպեդական վաղ և ավելի ուշ ցուցաբերվող միջամտության արդյունքների համեմատական վերլուծությունն ակնհայտորեն հաստատում է համալիր մեթոդակազմի կիրառման արդյունավետությունն անգամ ավելի ուշ ցուցաբերվող միջամտության պայմաններում, սակայն պետք է փաստել, որ, այնուամենայնիվ, այդ արդյունավետությունը գերակշիռ դեպքերում ավելի ցածր է և դժվար հասանելի, քան վաղ միջամտության արդյունավետությունը:

Առաջադրվող լոգոպեդական վաղ միջամտության մոդելի կիրառումը թույլ է տալիս համակարգել աուտիզմի համախտանիշ ունեցող երեխաների սոցիալական հարմարվողականության զարգացումը, աջակցել իրականացվող լոգոպեդական վաղ միջամտության գործընթացի կազմակերպմանը՝ ներգրավելով նրանց սոցիալական միջավայր, ընդլայնելով նրանց սոցիալական շփումը և զարգացնելով երեխաների էքսպրեսիվ բանավոր խոսքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրատարակումներում.

1. Խառատյան Ք.Ա., Հովյան Գ.Ռ. Աուտիզմը բնութագրող հիմնական առանձնահատկությունները և համալիր միջամտության կարևորությունը լոգոպեդական տեսանկյունից. «Հոգեկան առողջության հայկական հանդես» գիտական պարբերական, հատոր 11, թիվ 2.2020 էջ 19-27

2. Խառատյան Ք.Ա. Ծնողավարության դերը աուտիզմի սպեկտրի խանգարումներով երեխաների լոգոպեդական վաղ միջամտության արդյունավետ կազմակերպման համատեքստում.«Մանկավարժական միտք» Տաթև գիտակրթական համալիր, Զանգակ հրատարակչություն, 2022թ, 3-4(80-81), էջ 228-234
3. Խառատյան Ք.Ա. Աուտիզմի սպեկտրի խանգարումներ ունեցող երեխաների լոգոպեդական վաղ միջամտության հետազոտության արդյունքների վերլուծությունը Հայաստանում ծնողավարության և թիմային աշխատանքի տեսանկյունից. «Հոգեկան առողջության հայկական հանդես» գիտական պարբերական, հատոր 13, թիվ 2.2022 էջ 4-13
4. Харатян К.А., Овян Г.Р. Проблемы ранней диагностики и раннего логопедического вмешателства детей с нарушениями спектра аутизма. Педагогика и современное образоване: традиции, опыт и иновации. Сборник статей VII Международной научно-практической конференции/ Пенза, Издательство: МЦНС «Наука и просвещение» 2019. Ст.262–265, РИНЦ
5. Харатян К.А., Овян Г.Р. Проблемы раннего вмешателства детей с нарушениями спектра аутизма в Армении в ЦЗ «АрБеС» и модели логопедического вмешателства. Наука и образование: Сохраняя прошлое, создаем будущее. Сборник статей XXII Международной научно-практической конференции. ЧАСТЬ 2/ Пенза, Издательство: МЦНС «Наука и просвещение» 2019. Ст.181–184, РИНЦ
6. Харатян К.А., Овян Г.Р. Характеристика основных признаков аутизма и важность раннего логопедического вмешателства. Международная научно-практическая интернет конференция. DEVELOPMENT OF EDUCATION, SCIENCE AND BUSINESS: RESULTS 2020. 3-4 декабря 2020, Днепр (Украина). Ст.474-476
7. Харатян К.А., Овян Г.Р. Статистические особенности детей с РАС с точки зреня половой принадлежности. Всеросийская научно-практическая конференция с международним участием, Санкт-Петербург, 2 апреля 2021. Социально-гуманитарные технологии в управлении человеческими ресурсами в сфере физической культуры, спорта и здоровья. Потенциал спорта в системе международных отношений. Ст.190-192
8. Харатян К.А. Анализ результатов иследования логопедического вмешателства у детей с РАС с позиции методического примененя. Научный журнал «Обществознание и социальная психология» выпуск 13(43) 2022. Ст. 941-947, РИНЦ
9. Kharatyan K., Hovyan G. Proven and reliable methods of early speech therapy intervention for children with ASD. Armenian Journal of Special Education, Vol.3 No.1(2021), 26.03.2021. P. 39-48
10. Kharatyan K. The analyses of possible indicators of children with autism spectrum disorders early diagnosis. Armenian Journal of Special Education, Vol.4 No.2(2021), 23.08.2021. P. 59-78

ХАРАТЯН КРИСТИНА АРСЕНОВНА
МОДЕЛЬ РАННЕГО ЛОГОПЕДИЧЕСКОГО ВМЕШАТЕЛЬСТВА В РАБОТЕ С ДЕТЬМИ С СИНДРОМОМ АУТИЗМА

Диссертация на соискание ученой степени кандидата педагогических наук по специальности 13.00.03. - «Специальная педагогика» (Логопедия).

Защита диссертации состоится 04 мая 2023 г., в 12:00 на заседании специализированного совета 020 ВАК „Педагогика» по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна по адресу: 0010, Ереван, ул. Тигран Меца 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования: Аутизм - одно из наиболее часто диагностируемых в наше время нарушений развития, характеризующееся коммуникативными проблемами, повторяющимися поведенческими проблемами и ограничениями социализации. В 2021 году статистические исследования синдрома аутизма, позволяет констатировать, что в настоящее время каждый 100-й ребенок имеет расстройство аутистического спектра (РАС), и эти данные постоянно обновляются.

Индивидуальное применение современных логопедических методов и средств раннего вмешательства, применяемых в работе с детьми с РАС, в определенной степени стимулирует развитие ребенка, однако необходимо подчеркнуть необходимость систематического освоения этих методов в пользу разностороннего развития детей и повышения эффективности работ преодоления вышеперечисленных проблем с использованием логопедической модели раннего вмешательства.

Цель исследования – разработка системной модели раннего логопедического вмешательства с детьми с аутизмом, направленного на формирование и развитие речи и общения.

Задачи исследования:

1. Изучить степень разработанности исследуемой проблемы, современные подходы в научно-методической литературе и в условиях раннего логопедического вмешательства.

2. Изучить и проанализировать особенности раннего логопедического вмешательства, реализуемого с детьми с РАС: формирование и организация средств общения, которые в условиях применения соответствующей модели будут способствовать развитию их социальных коммуникативных возможностей.

3. Разработать системную модель, направленную на формирование и развитие речи детей с РАС, предложить педагогические условия раннего логопедического воздействия и экспериментально обосновать эффективность предложенных подходов.

Научная новизна исследования:

• Изучена установка раннего логопедического вмешательства для детей с РАС в различных реабилитационных и образовательных учреждениях, в частности в ЦЗ «АрБеС».

• Выявлен уровень информированности специалистов, студентов, родителей в проведении логопедического процесса раннего вмешательства, организуемых с детьми с РАС.
• Определены основные направления, характер и содержание организации ранней логопедической работы с детьми данной группы и разработана системная модель, направленная на формирование и развитие речи и общения, для ранней логопедической работы с детьми с аутизмом, которая включает в себя комплексную программу преодоления расстройств аутистического спектра.

Теоретическая значимость исследования определяется в теоретическом обосновании применения логопедической модели раннего вмешательства, реализуемой с детьми с аутизмом, на основе анализа и сравнения результатов исследований, проведенных в реабилитационных учреждениях, наиболее эффективных методов, средств и педагогические условия комплексной программы логопедического, речевого и коммуникативного развития детей с аутизмом такое расширение теоретических представлений, которое позволит обрабатывать информацию, собранную в результате теоретического исследования, и дополнить теоретический опыт новыми фактами научных исследований.

Практическая значимость исследования определяется в практической разработке предложенных педагогических условий, направленных на повышение эффективности логопедических методов ранней помощи, организованных с детьми с РАС и их внедрение в педагогический процесс через комплексную программу модели логопедической ранней помощи. В настоящее время разработанная нами логопедическая модель внедряется в логопедическую практику ЦЗ «АрБеС», а предлагаемые практические и программные материалы (игровые задания, упражнения, приемы, советы, условия, шкалы возрастного и игрового развития ребенка) можно использовать в дошкольном возрасте (0-6 лет) в процессе логопедической работы, организуемой с детьми с РАС, с акцентом раннего логопедического вмешательства (0-3 лет). Материалы исследования, с целью моделирования раннего логопедического вмешательства, использовались в процессе организации логопедической работы в ЦЗ «АрБеС» и в региональных реабилитационных центрах, могут быть использованы для подготовки специалистов и в работе по организации учебного процесса студентов, в системе повышения квалификации логопедов, в дальнейших научных исследованиях, направленных на изучение организации логопедического процесса раннего вмешательства, организованные с детьми с синдромом аутизма, в разработке и совершенствовании профессиональных семинаров, тренингов и лекций для сотрудников, оказывающих психолого-педагогическую поддержку.

Апробация исследования. Основные положения, результаты и выводы исследования в 2019–2022гг. были обсудены на сесиях кафедры «Логопедии и реабилитационной терапии» факультета Специального и инклюзивного образования Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, на профессиональных семинарах центра здоровья «АрБеС», во время телетрансляций. По результатам наблюдений и исследований были опубликованы авторские статьи в армянских и международных научных журналах. «Встреча с учителями диаспоры» по вопросам РАС на дистанционной платформе Zoom в марте 2022 г., также способствовала повышению межпрофессиональных отношений и осведомленности о проблеме, выступив в качестве спикера с соответствующим докладом и обсуждением.

Структура и объем диссертации. Диссертация состоит из 161 страниц компьютерного текста, из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложения. Текст диссертации содержит 14 таблиц, 20 диаграмм, 1 фигуры, 1 рисунок и 9 приложений.

KHARATYAN KRISTINA
MODEL OF EARLY SPEECH THERAPY INTERVENTION IN WORK WITH CHILDREN WITH AUTISM SYNDROME

Thesis submitted for the degree of candidate of Pedagogical Sciences, Specialty Area: 13.00.03 – ¨Special pedagogy" (Speech therapy)

The defense of the dissertation will take place on 04th of May, 2023, at 12:00 at the meeting of the specialized pedagogical committee "Pedagogy", 020 SSC for granting scientific degrees at the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan (address: 17, Tigran Mets avenue, 0010, Yerevan, Armenia).

SUMMARY

Relevance of the research: Autism is one of the most commonly diagnosed developmental disorders in our time, characterized by communication problems, repetitive behavioral problems and socialization limitations. In 2021, statistical research on autism syndrome allows us to state that currently every 100th child has an autism spectrum disorder (ASD), and these data are constantly updated.

The individual application of modern speech therapy methods and early intervention tools used in working with children with ASD stimulates the development of the child to a certain extent, however, it is necessary to emphasize the need for systematic mastering of these methods in favor of the all-round development of children and increasing the efficiency of work to overcome the above mentioned problems using the speech therapy model of early childhood intervention.

The aim of the study is to develop a systemic model of early speech therapy intervention with children with autism, aimed at the formation and development of speech and communication.

Objectives of the study:

1. To study the current problem, modern approaches in the scientific and methodological literature and early speech therapy intervention.

2. To study and analyze the features of early speech therapy intervention implemented with children suffering ASD: the formation and organization of communication tools that, under the conditions of applying the appropriate model, will contribute to the development of their social communication capabilities.

3. To develop a systemic model aimed at the formation and development of the speech of children with ASD and experimentally substantiate the effectiveness of the proposed approaches.

The scientific novelty of the study:

- The installation of early speech therapy intervention for children with ASD in various rehabilitation and educational institutions, in particular in the ArBeS Center is studied.
- The level of awareness of specialists, students, parents in carrying out early intervention speech therapy activities organized with children with ASD was revealed.
- The main directions and content of the organization of early speech therapy work with children of this group were determined and a system model was developed aimed at the formation and development of speech and communication for early speech therapy work with children with autism, which includes a comprehensive program for overcoming autism spectrum disorders.

The theoretical value of the research is determined: In the theoretical substantiation of the application of a speech therapy model of early intervention implemented with children with autism, based on the analysis and comparison of the results of studies conducted in rehabilitation institutions, the most effective methods, means and pedagogical conditions of a comprehensive program of speech therapy, speech and communicative development of children with autism, such an extension of theoretical ideas, which will allow processing the information collected as a result of theoretical research, and supplementing the theoretical experience of speech activity therapy with new facts of scientific research.

The practical significance of the study is determined: In the practical development of the proposed pedagogical conditions aimed at improving the effectiveness of early speech therapy methods organized with children with ASD and their implementation in the pedagogical process through a comprehensive program of the early speech therapy model. At present, the speech therapy model developed by us is being introduced into the speech therapy practice of the ArBeS Central Health Center, and the proposed practical and program materials can be used for preschool age (0-6 years) in the process of speech therapy work organized with children with ASD, with an emphasis on organizing intervention as early as possible (0-3 years). The materials of the study were used in the process of organizing the speech therapy work of the ArBeS Central Health Center and regional rehabilitation centers, can be used by rehabilitation centers for training personnel, as well as organizing educational process of students studying in pedagogical universities, in the system of professional development of speech therapists, in the development and improvement of professional seminars, trainings and lectures for employees providing psychological and pedagogical support.

Approbation of the study: Main provisions and results of the study of 2019-2022 were discussed in the Department of Speech Therapy and Rehabilitation Therapy of the Faculty of Special and Inclusive Education of the ASPU, at professional seminars of the ArBeS Health Center, during television broadcasts. Based on the results of observations and research, several scientific articles were published in Armenian and international scientific journals. In March 2022, within the framework of ASD issues, the “Meeting with Diaspora Teachers”, held with the participation of school principals and educators of the Armenian Diaspora communities on the Zoom remote platform, contributed to increasing interprofessional relations and awareness of the issue being involved as a speaker with the corresponding report and discussion.

The structure and volume of the dissertation: The dissertation consists of introduction, 3 chapters, conclusions, a list of used literature and an appendix. The work contains 161 computer pages text and includes 14 tables, 20 diagrams, 1 figure, 1 picture and 9 applications.